

**Չ. ԲՈՒԿՈՎՍԿՈՒ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԺԱՆՐԱՅԻՆ ԵՎ ԼԵԶՎԱԿԱՆ  
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

*Հորվածում ուսումնասիրվում է ամերիկյան «անդերգրաունդի» գրող Չարլզ Բուկովսկու արձակի և պոեզիայի ժանրային ու լեզվական առանձնահատկությունները: Հանգերի բացակայությունը և գրելու ազատ ոճը գործնականորեն վերացնում են սահմանները չափածո և արձակ ստեղծագործությունների միջև. հաճախ նրանց միջև եղած տարբերությունը արտահայտվում է միայն ստեղծագործության չափերի և տողի երկարության մեջ: Իր ստեղծագործական արմատներով Բուկովսկին կապված է գերմանական ռոմանտիզմի և էքսպրեսիոնիզմի ավանդույթների հետ, որոնց բնորոշ հատկանիշներն են՝ տարակերպումը խելագարության և առողջ բանականության սահմանագծի եզրին, «հոգու գիշերվա» բացահայտման ձգտումը: Լեզվական առումով Բուկովսկու ստեղծագործություններում ակնհայտ է պարզության և հստակության համադրությունը «բնասպաշտական» դայրոցի ուղղամտության և կոշտության հետ:*

**Բանալի բառեր.** Բուկովսկի, պատմվածք, բանաստեղծություն, «կեղտոտ ռեալիզմ», «անդերգրաունդի» գրականություն, ռոմանտիկական և իմպրեսիոնիստական ավանդույթ

Ամերիկացի բանաստեղծ և արձակագիր Չարլզ Բուկովսկին (1920-1994թթ.) Ամերիկայի՝ 1950-60-ական թվականների բոհեմային «նատուրալիստական» դայրոցի ներկայացուցիչ է, ով գաղափարական առումով շարունակում է բիթնիկ գրողների ավանդույթը:

Ստեղծագործական առաջին շրջանը հաջողություն չբերեց երիտասարդ գրողին: Նա լքում է ծնողական տունը և տարիներ շարունակ դեգերում ամբողջ Ամերիկայով:

Երկար թափառումները և ակոհոլը գրողին հասցրին հիվանդանոց, ինչից հետո Բուկովսկին կրկին վերադառնում է գրական գործունեությանը՝ զուգակցելով դա ծանր աշխատանքի հետ: Երեկոները նա բանաստեղծություններ է գրում և ուղարկում գրական տարբեր հանդեսներ: «Առլեկին» ամսագրի համարներից մեկը ամբողջովին կազմված էր Բուկովսկու բանաստեղծություններից: Հետագայում նա մեկնում է Տեխաս, ծանոթանում և ամուսնանում է ամսագրի խմբագրի հետ, սակայն այդ ամուսնությունը երկար չի տևում: Թեև շարունակում է իր նախկին անկանոն կյանքը, այնուամենայնիվ ավելի շատ է գրում և արդեն ավելի շատ է տպագրվում: Գրողի պատմվածքները լույս են տեսնում «Մշտադալար Ռեյնո» ամսագրում, իսկ պոեզիայի սիրահարների կալիֆոռնիական «Էվրիկա» ընկերությունը տպագրում է նրա բանաստեղծությունների ժողովածուն: Հիմնական բանաստեղծությունների ժողովածուները,

որոնք գրավեցին քննադատների և ընթերցողների հետաքրքրությունը հրատարակվեցին «Լուջոն Պրես» փոքր մասնավոր հրատարակչությունում:

1960-ականների սկզբին «Լուջոն Պրեսը» հրատարակում է հայտնի «Աուտսայդեր» ամսագիրը, որն ուներ ձախ ծայրահեղական ուղղվածություն: Ընդհանուր առմամբ լույս են տեսնում ամսագրի վեց համարներ: Հենց առաջին համարի (1961թ.) ցանկում կարելի է հանդիպել գրեթե բոլոր առաջատար բիթնիկ-գրողների անունները՝ Ջեք Բերուաք, Հենրի Միլլեր, Վիլյամ Բերուոզ: Հենց այդ նույն առաջին համարում լույս տեսավ նաև Չարլզ Բուկովսկու բանաստեղծությունների ընտրանու շարքը: 1960-ականների կեսերին այդ բանաստեղծություններն էին ձգտում տպել հարյուրավոր ոչ մեծ պոետական հանդեսներ:

Այդ ժամանակ Բուկովսկին հայտնի էր հիմնականում որպես բանաստեղծ, ով գրում էր եռանդուն, բայց նյարդայնացնող բանաստեղծություններ, որոնք լի էին սրամտությամբ և դաժան դառնությամբ: Այդ բանաստեղծությունները մի կողմից հիշեցնում էին Ուոլթ Ուիթմենի, մասամբ էլ՝ սյուրռեալիստների և բիթնիկների «ավտոմատիկ գրելաձևը»: Առաջին հայացքից Բուկովսկու պոեզիան շատ կոպիտ է և հիշեցնում է հում նյութ: Մյուս կողմից նա դարձրեց պոեզիան հասարակ և բոլորի համար մատչելի: Չարլզ Բուկովսկու պոեզիայի հիմքում մարդկային գոյի հիմքերի որոնումն է: Նրա ոճը հաճախ համեմատում են Հեմինգուեյի հետ. պարզ ածականներ, կարճ բառեր և պարբերություններ, որոնք կոնկրետ վերաբերում են շոշափվող հարցին և «չեն շեղվում»:

Բուկովսկին ատում է կեղծիքը և հավակնոտությունը, խուսափում է պերճաշուքությունից և պճնամոլությունից: Նրա ոճը հասարակ է և ուղիղ, խոսքը՝ լակոնիկ և նպատակաուղղված, ոչ մի այլաբանություն և մետաֆոր: Նրա կարգախոսն էր. «Ինձ դուր է գալիս ասել այն, ինչ ես պետք է ասեմ ու թողնեմ գնամ» /Arnold, 1963: 7/:

1966 թվականին Չարլզ Բուկովսկու մեծ երկրպագու Ջոն Մարթինը հիմնում է «Սև ճնճղուկը» հրատարակչությունը՝ առաջին հերթին հենց այն բանի համար, որպեսզի տպագրի Բուկովսկու ստեղծագործությունները՝ ինքնակենսագրական ակնարկները, կենցաղային պատմությունները, տարբեր տարիների դիտարկումները, ինչպես նաև նրա բանաստեղծությունները: Եվ քանի որ Բուկովսկին մշտապես նյութական կարիքի մեջ էր, Ջոն Մարթինը 1969 թվականին առաջարկեց նրան ամսական վճարել հարյուր դոլար, որպեսզի վերջինս չշեղվի գրական աշխատանքից: Բուկովսկին անչափ ուրախ էր այդ առաջարկի համար: Շատ շուտով «Սև ճնճղուկ» հրատարակչության ֆոնդի մեջ են մտնում Բուկովսկու 23 անուն ստեղծագործություններ, և այն դառնում է Միացյալ Նահանգների ամենահարգված անկախ հրատարակչություններից մեկը: Գրքերի տպաքանակը հասնում էր աստղաբաշխական թվերի: Ջոն Մարթինը խոստովանում է. «Նա ինձ օգնեց կառուցել իմ հրատարակչական բիզնեսը, ես նրան օգնեցի դառնալ բարգավաճող և ունևոր գրող: Դիշտ է, Հենքը, այնուամենայնիվ, մահացավ որպես պատուհաս, բայց որպես ունևոր պատուհաս» /Martin, 1967:12/:

1969-1972 թվականներին լույս ընծայած բանաստեղծական երեք ժողովածուների համար Բուկովսկին ստանում է Արվեստների խրախուսման ազգային

հիմնադրամի մրցանակը: Նա բնակարան է գնում Հովիվուդում և սկսում է համագործակցել տարբեր ազատ ամսագրերի հետ, որտեղ վարում է մի առանձին բաժին՝ «Ծեր շնացողի նոթերը» խորագրի տակ: Այստեղ նա ջախջախում է հիփիներին, որոնք պաշտում էին իրեն:

Մի քանի տարի անց լույս են տեսնում նրա «Կանայք» (1978), «Ապխտած մտով հաց» (1982) վեպերը, ուր նորովի են ներկայանում սեզոնային բանվորների, մարմնավաճառների, բարմենների և թափառականների կյանքի տեսարանները: Վեպերի մշտական հերոսը Հենրի Չինասկին է, ով զգվել է կեղծ քաղաքավարությունից և «պլաստմասե մշակույթից», ուր բոլորը ստում են միմյանց, և ուր երբեք չես լսի մի հասարակ ազնիվ խոսք: Միակ ուրախությունը խմիչքն է, կանայք և խաղատան ապարատները: Վեպը մեծ հաջողություն բերեց Բուկովսկուն, և 1970-ականների վերջին նա արդեն լայն ճանաչում գտավ: Նրան հաճախ հրավիրում են ելույթ ունենալ ընթերցողների առջև, իսկ նրա ուղևորությունները Եվրոպա, մասնավորապես Գերմանիա և Ֆրանսիա, դարձան նշանակալի մշակութային իրադարձություններ, որոնք լայնորեն լուսաբանվում էին հեռուստատեսությամբ և մամուլով: Համեմատելով «Կանայք» վեպը երկու տարի դրանից առաջ լույս տեսած պատմվածքների ժողովածուի հետ՝ կարելի է փաստել դրանց միջև եղած ընդհանրությունները. հիմնականը գաղափարական, խորքային կողմն է՝ ռաբլեական հումորի յուրահատուկ կիրառումը, երբ հեղինակը ծիծաղում է գրողների, քաղաքագետների, ֆեմինիստուհիների, համասեռամուլների վրա: Նշված մարդկանց շրջապատում գրողն իրեն զգում է խորթ միջավայրում: Այդ շրջանի պատմվածքներում կա շատ բան, ինչը հետո իր արտացոլումն է գտնում «Կանայք» վեպում: Առավել մեծ է նմանությունը հատկապես «Քաղաքի ամենագեղեցիկ կինը» պատմվածքի հետ: Այս պատմվածքի, ինչպես նաև «Կանայք» վեպի հիման վրա ստեղծված «միաձույլ» սցենարը ընկած է «Սովորական խելագարության պատմություն» հայտնի ֆիլմի հիմքում, որը համարվում է Բուկովսկու ստեղծագործությունների հիման վրա գրված լավագույն էկրանավորումը: Հեղինակի վեպերի և պատմվածքների հիման վրա տասը տարի անց ստեղծվեց ևս մեկ հաջողված ֆիլմ՝ «Մառը լուսինը»: Սա հոգեբանական դրամա է՝ ստեղծված սև հումորի ժանրով: Հեղինակը, ներկայացնելով իր հերոսների խենթ հումորը, պատմում է նրանց «սանձարձակ» արկածների մասին: Այս ամենի հետ մեկտեղ նա ցույց է տալիս, որ իր հերոսները բարձր մտքեր են տաժում աշխարհի էության ու գեղեցկության մասին և այն համոզմունքն արտահայտում, որ գեղեցկությունը կարող է բացվել յուրաքանչյուրին ամենաանսպասելի տեսքով: Ինքը՝ Բուկովսկին, մասնակցում է ինչպես այդ սցենարների գրելու գործին, այնպես էլ բուն ֆիլմերի նկարահանումներին: Նա ձգտում է ամեն կերպ պահպանել դրանց մեջ իր վեպերի ու պատմվածքների ոգին, «ներքին էությունը», և դրա հետ մեկտեղ ցույց տալ այն իմաստային կապը, որը միացնում է այս կամ այն պատմվածքը, կամ վեպի այս կամ այն դրվագը՝ սյուժետային մեկ այլ տեսարանի հետ: Բուկովսկու մասնակցությամբ ստեղծված այս երկու ֆիլմերի մեծ հաջողությունից հետո, նա հրավեր է ստանում աշխատել Հովիվուդում որպես սցենարիստ: Հեղինակի սցենարով նկարահանված «Հարբեցողները»

Ֆիլմը նույնպես լայն արձագանք ստացավ ոչ միայն Ամերիկայում, այլև Եվրոպայում: Բուկովսկին, խորանալով հոլիվուդյան կինոաշխարհի «ներքին խոհանոցի» մեջ, ստեղծում է իր նոր՝ «Հոլիվուդ» ֆիլմը, ուր նկարագրում է այդ կինոֆաբրիկայում տիրող կարգերն ու բարքերը: Այդ «շինծու կյանքի» ակտիվ խորապատկերի վրա հեղինակը ներկայացնում է այս ամբողջի մեջ աչքի ընկնող մեծատաղանդ գրողին՝ Վիկտոր Նորմանին: Այս կերպարի նախատիպը նյու-յորքյան գրող Նորման Մեյլերն է, որին՝ ոճի և աշխարհայացքի առումով, կալիֆորնիացի Բուկովսկին համարում էր իրեն հոգեհարազատ:

Դասական ժամանակակից գրականությունը Բուկովսկին համարում էր չափազանց պճնված և շինծու: Ինքը՝ Բուկովսկին, գրում է «ոչ հարուստ» լեզվով, այսինքն ոչ այնպես, ինչպես ընդունված է, ինչպես հարկ է: Նրան դուր են գալիս այնպիսի գրողներ, ինչպիսիք են Ներոուդան, Հեմինգուեյը (միայն վաղ շրջանը), Մելինջերը, Համսունը, Վիյոնը, Դոստոևսկին: Քննադատներից մեկը նշում է, որ մարդկային առումով, չնայած իր անհաշտ և կռվարար բնավորությանը, նա միշտ պահպանում էր մտքի բացարձակ պարզությունը և գիտակցության վերահսկողությունը, նրա մեջ կար այնքան հրապուրիչ բարեհոգություն, արիություն և առատաձեռնություն, որ նրան անվանում էին «ընդհատակի միակ իրոք սիրված պոետ» /Don Strachan, 1971: 4/:

1993 թվականին «Սև ճնճուկ» հրատարակչությունում լույս տեսավ Բուկովսկու կյանքի օրոք հրատարակված անթոլոգիան: Դրա մեջ մտան մի շարք պատմվածքներ, չափածո գործեր և նրա վերջին «Մակուլատուրա» վեպը: Այս վեպին, ինչպես և նախորդներին, բնորոշ է հումորի զգացումը, ազատ խոսքը, շեշտը սեռականության և ժարգոնային, սլենգային արտահայտությունների վրա: Միևնույն ժամանակ վեպը ներթափանցված է մոտեցող մահվան տրամադրություններով: Այստեղ, օրինակ, գտնում ենք այսպիսի տողեր. «Ուզում եմ, որ ինձ թաղեն ձիարշավարանի մոտ, ուր կլսվի վերջին վագարշավը» /Arnold, 1963: 29/:

«Մակուլատուրա» վեպում, ինչպես և այդ շրջանում գրված պատմվածքներում, Բուկովսկին շարունակում է մնալ, այսպես կոչված, «նատուրալիստական» դպրոցի ամենատաղանդավոր և հեղինակավոր առաջնորդը: Այս դպրոցի ներկայացուցիչները կոպիտ և ագրեսիվ կերպով մերկացնում են մարդ արարածի և ամբողջ հասարակության «խոցելի» ներքին էությունը: Կյանքի հատակում հայտնված «ցայտուն» թափփուկները Բուկովսկու գրչի տակ ներկայանում են որպես ոչ պակաս հետաքրքիր ու խոր, քան բարձր դասի ներկայացուցիչները: Նրանք նույնպես ունեն մարդկային արժեքների, ինչպես նաև պատվի սեփական «կողերք»: Նրանք չեն խորշում անվանել իրերը «իրենց զզվելի անուններով»՝ չգունազարդելով ճշմարտությունը և ջայլամի պես չթաքցնելով գլուխը ավագի մեջ: Այս առումով Բուկովսկու ստեղծագործությունը յուրատեսակ անարխիստական երգիծանք է և սադրանք. «Նա մարտահրավեր է նետում: Նա մշտապես շփում է մի բաժակ սառը ջուր ուղիղ ձեր դեմքին և պահանջում որպեսզի դուք մտածեք այն մասին՝ ով եք դուք, և ինչ է ձեր կյանքը,– գրում է քննադատներից մեկը» /Chenetier, 1977: 47/:

Նրան հետաքրքրում են մարդկային գոյի հիմքերը, որոնք հաճախ թաքնված են լինում գրվածի տակ, բայց հենց դրանք են պահում օճախազանգի ամբողջ կառույցը:

Ստեղծագործական կյանքի ընթացքում գրողի հիմնական թեմաներն են եղել միայնակությունը, դասական երաժշտությունը, ակնհույզ, կանայք, հիացմունք պատճառող գրողները, տեսարանները սեփական մանկությունից, ձիարշավային մրցավազքերը:

Արձակի և պոեզիայի երկրնորանքի մեջ գրողի համար ավելի հոգեհարազատ է առաջինը. սա է իր տարերքը, այստեղ է նա ամբողջապես արտահայտվում: Հետաքրքիր է, որ Ամերիկայում և մասամբ Եվրոպայում Բուկովսկուն ընկալում են ավելի շուտ որպես պոետ: Ինքը՝ Բուկովսկին, խոսելով այն մասին, թե ինչպես է եկել բանաստեղծական ձևին, նշում է, որ դրա պատճառը միանգամայն պարզունակ է. բանաստեղծությունների վրա նա ավելի քիչ ժամանակ էր ծախսում: Նա խոստովանում է, որ սկսել է գրել ոչ այն պատճառով, որ ինքը շատ լավն է, այլ որովհետև մնացածները ավելի վատն են. «Ես հեշտացրի մյուսների խնդիրը: Ես նրանց սովորեցրի, որ բանաստեղծությունը կարելի է գրել ճիշտ այնպես, ինչպես գրում ես նամակը, և որ այն կարող է զվարճալի լինել» /Arnold, 1963: 109/:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ Բուկովսկու արձակի և պոեզիայի միջև էական տարբերություն չկա. հարցը միայն տողի երկարության մեջ է: Եթե նրա բանաստեղծությունների մեծ մասը դասավորենք մինչև տողի վերջ, ապա նա կստանա արձակի տեսք և կունենա նույն հնչեղությունը: Բուկովսկին առանձնակի նշանակություն չէր տալիս ձևին. արձակի և պոեզիայի միջև նրա համար չկա սահմանագիծ, հարցը սոսկ հարմարավետության մեջ է: Այդուհանդերձ, կար մի փոքրիկ, բայց էական գործոն, որը թելադրում էր նրան գրել արձակ կամ չափածո. դա այդ պահի իր տրամադրությունն էր և վիճակը, արձակը նա գրում էր միայն այն ժամանակ, երբ իրեն լավ էր զգում, իսկ պոեզիան հակառակը՝ երբ վատ էր:

Բուկովսկու կարևոր սկզբունքներից մեկը պարզ ու հասարակ գրելն էր: Լինելով «բնության մարդ», ինչպես և իր հայրենակից Հենրի Տորոն, նա միշտ ձգտում էր պարզության: Գունագարդումներից և բարձր ոճից խուսափելու համար Բուկովսկուն հաճախ դասում են «կեղտոտ ռեալիզմի» ուղղությանը, որի բնորոշ հատկանիշներն են համարվում բառերի առավելագույն տնտեսումը, նկարագրությունները նվազագույնին հասցնելը, երկխոսությունների մեծ քանակը, խոհերի և փիլիսոփայական մտորումների բացակայությունը, աչքի չընկնող հերոսները և բովանդակության կողմից թելադրվող իմաստը: Բուկովսկու ստեղծագործությունը հաճախ դասում են նաև «մսային դայրոցի» ներկայացուցիչների շարքին, ուր նրա կողքին հիշատակվում են Սթիվ Ռիչմոնդի, Գուլյաս Բլեյզեքի և այլոց անունները: Այս ուղղության գրողները բնորոշվում են ագրեսիվությամբ, «առնականությամբ»:

Գրելու ընթացքում նա երբեք ոչինչ չէր ուղղում և չէր խմբագրում, այլ միայն պարզապես ջնջում էր չհաջողված տողը ամբողջապես: Հեղինակն իրեն զգում էր ինչպես լուսանկարիչ, ով ֆիքսում և շարադրում է այն ամենը, ինչ տեսել կամ ինչ իր հետ տեղի է ունեցել:

Բուկովսկու լեզուն աստիճանաբար կոփվեց որպես հստակ ու կոպիտ ամերիկյան խոսք, ուր հազվադեպ են հանդիպում «զարդանախշեր»: Է. Քամինգզի ոճի բառային խաղերը ավելի շուտ այն բացառություններն են, երբ հեղինակը շեղվում է իր «ծանր էքզիստենցիալիստական դասարկությունից»: Նա ամեն կերպ խուսափում է դասական լեզվից և դասական ոճից: Բուկովսկին գրում է. «Ես ավելի լավ է լսեմ մի կենդանի ամերիկացի թափառաշրջիկի մասին, քան մահացած հունական աստվածի» /Arnold, 1963: 39/:

Խոսելով իմաստության որոնման մասին՝ Բուկովսկին այն համոզմունքն է արտահայտում, որ դրա համար անհրաժեշտ է մի քանի օր պառնել կիսագինովցած վիճակում և ներկլանվածության վիճակում «խորասուզվել» Լաո-Յզիի իմաստության խորքերը: Ուիթմենի և Տորոյի պես Բուկովսկին հաճույքով կցանկանար իր վրայից գցել մարդկային «մորթին», որպեսզի ձեռք բերի ամբողջականություն, ամբողջական բնական կյանք, քանի որ «վերջին հաշվով մենք բոլորս կենդանական աշխարհին ենք դասվում: Սակայն, ինչպես նշում է Դ. Հ. Լուրենսը, հարցը միայն այն է, որ մենք պետք է լինենք բարի կենդանիներ» /Miller, 2001: 18/:

Որպես հիպերռեալիստ՝ Բուկովսկին ստեղծում է տեքստ, ուր առկա են բազմաթիվ ասոցիատիվ կապեր, մի թեմայից մյուսին հրաշալի անցումներ, անսպասելի համադրություններ: Անգամ իր ստեղծագործությունների վերնագրերի մեջ Բուկովսկին կարողանում է ստեղծել սարսափելիի և զավեշտականի, կոպիտի ու նրբագեղի «խառնուրդներ»՝ հակադրելով «ցածրաճաշակ» մշակույթը «բարձրաճաշակին»: Նույնը բովանդակության մեջ է. մռայլ էքզիստենցիալիզմը կարող է հաջորդել կամ միահյուսվել ծիծաղի և սրամտության հետ:

Բուկովսկու ստեղծագործությունը «բազմաձայն» է. նա կարծես թատրոնի դերասան լինի, ով կրկնօրինակում է ուրիշի ձայները և գիտակցում, թե ինչ կարող է հաղորդել ընդամենը մեկ դիպուկ ռեալիկի միջոցով: Խոսելով կինոռեժիսոր Բարբե Շրյոդերի հետ՝ Բուկովսկին արտահայտում է այն միտքը, թե որքան է նրան ձանձրացնում կենսական ամենօրյա պտույտը՝ իր կրկնվող «դասարկություններով». նա համոզված է, որ ճշմարտությունը չի ծնվում հարցազրույցներից, անիմաստ բանավեճերից: «Ճշմարտությունը հակասությունների, լույսի և ստվերի սահմաններից այն կողմն է: Այն բխում է արյունից» /Arnold, 1963: 117/:

Երբեմն այնպիսի տպավորություն է ստեղծվում, որ Բուկովսկին հանկարծակի հայտնվել է մի աշխարհում, ուր նրան տեղ չկա: Նա շատ հաճախ ասելու բառեր չի գտնում, քանի որ համարում է իրեն մի փոքրիկ տիեզերական մասնիկ, ում ճակատագիրը նետել է անհոգի Ամերիկա: Ամերիկան նրան ներկայանում է որպես մի հսկայական և անզգա մեքենա, որը երբեք չի կոտրվում, և գտնվելով այդ մեքենայի մեջ՝ հոգու աշխատանքը կարելի է պահպանել միայն գինով ու միայնակությամբ, պոեզիայով և երաժշտությամբ, ինչպես նաև կանանց միջոցով: Բուկովսկին երբեմն իրեն զգում է որպես ստորգետնյա մի կենդանի, ով փորձում է մի պահ գոնե դուրս գալ երկրի երես, թոթափել իր հոգին, սակայն չի կարող, քանի որ ամերիկյան գործարար հասարակության անզուր մեքենան ճնշում, խեղդում է իրեն: Բուկովսկու պատ-

մվածքների ավելի ուշադիր ընթերցումը ցույց է տալիս, որ նա իրականում շատ խոցելի ու անպաշտպան անհատականություն է: Այն, որ ամերիկյան գրական վերնախավը ունակ չէ հասկանալ Բուկովսկուն, հիմնականում գալիս է այն բանից, որ այն չի ցանկանում «փորփրել» գրողի մութ խորքային արմատները, իսկ դա նշանակում է, որ նաև չի կարող գտնել նրա բուն էությունը: Իր ստեղծագործական արմատներով Բուկովսկին սերում է գերմանական ռոմանտիկական և էքսպրեսիոնիստական ավանդույթից՝ իսկ նաև դեմոնական պոետների շարքից՝ Հյուդերլին, Բլայսթ, Նիցշե, Թրաքլ, Կաֆկա, Հեսսե, Ռիլկե: Նշված բոլոր գրողները միշտ շարժվում էին առողջ գիտակցության սահմանագրի վրա, տառապում էին հոգու «մութ գիշերներից»: Գերմանացի արվեստագետների ու գրողների մեծ մասը ավելի խորը և պատկերավոր է ներկայացնում մարդու օտարվածությունն ու մեկուսացվածությունը, միջմարդկային կապերի բարդությունը:

Բուկովսկու պարագայում սրան գումարվում է զգացմունքների հաղորդման անմիջականության դաժան ու կոշտ գերմանական ավանդույթը: Նա հետազոտում էր մթության և խելագարության խնդիրները, բայց այդ հետազոտությունները նրա համար ընդամենը տրանսգենդենցիայի (անդրանցակնության) խնդիրների մեջ խորանալու համար մղված «պայքարի» մի մասն է: Դա մշտական «պատերազմ» է մարդու խորքային էության բացահայտման ճանապարհին: Բուկովսկին համոզված է, որ շարքային քաղթենի ամերիկացու համար նման հարցեր և խնդիրներ գոյություն չունեն, նրան այս ամենը բնավ չի հետաքրքրում:

Բուկովսկին համարում է, որ մարդկությունը երկու հազարամյակից ավելի անց է կացրել կիսաքրիստոնեական մշակույթի պայմաններում, ուր բարբարոսական իդեալները միախառնվում են ազգային կրթական համակարգերի հետ: Այստեղից նա հետևություն է անում. «Մարդը գիտակցության զարգացումը Ամերիկայում գրեթե անհնար է, եթե մարդու բախտը չի բերել, և նա չի անցկացրել իր կյանքի առաջին 25 տարիները հոգեբուժարանում կամ որևէ այլ մեկուսացված վայրում, այլ կերպ ասած՝ եղել է անձեռնմխելի» /Arnold, 1963: 127/:

Բուկովսկին շատ քննադատաբար է վերաբերվում այն գրողներին, ովքեր կորցնում են ճշմարտության տանջալի որոնման ձգտումը, բայց հետո, հետևելով մոդային, «կատարում են հասարակական պատվեր»: Գրողը նշում է, որ կային հեղինակներ, ովքեր շատ լավ սկսեցին, բայց հետո, չգիտես ինչու, շեղվեցին դեպի քաղաքականությունը, կամ դարձան ինչ-որ շարժման առաջնորդ, ինչպես, օրինակ, Էզրա Փաունդը: Այդպիսի գրողները դառնում են մարգարեներ և, որպես կանոն, անպետք մարգարեներ /Arnold, 1963: 39/: Բուկովսկին համբավ ձեռք բերելուց հետո հաճախ մասնակցում էր գրական ընթերցումներին, կարդում էր հատվածներ սեփական ստեղծագործություններից և պատասխանում ներկաների հարցերին: Նա անում էր դա հանուն փողի և առանձնակի հաճույք դրանից չէր ստանում: Ինչ վերաբերում է գրական արհեստանոցներին, նա անվանում էր դրանք «ստերի ակումբներ». «Ամենից հաճախ դա վատ գրողների մի խումբ է, ովքեր հավաքվում են միասին և միմյանց կարդում անպետք բաներ և, որպես կանոն, միմյանց չափից ավել գովում: Դա

ավելի շուտ կործանարար է, քան օգտակար, քանի որ նրանք այն կարծիքն են ստեղծում, որ իրենց գրածը հանճարեղ է» /Arnold, 1963: 147/: Նա գտնում է, որ ստեղծագործական ոչ մի շփում, գրական ոչ մի սեմինար չեն սովորեցնի գրողին գրական արվեստ, քանի որ քննադատությունը նման շփումների ժամանակ չափազանց քիչ է կամ ընդհանրապես չկա: Փոխարենը նա գտնում է, որ լավ գրելու համար պարզապես պետք է կարդալ լավ գրողների: Սակայն այստեղ հարց կարող է առաջանալ, որ գրողներն են մտնում այդ հասկացության մեջ, և կ՞ա արդյոք մի որևէ ընդհանուր չափանիշ դրա համար: Սակայն հենց իր՝ Բուկոփսկու անձնական փորձը ցույց է տալիս, որ դա շատ հարաբերական է: Այսպես, Լոուրենսը, որով նա նախկինում հիանում էր, շատ շուտով դարձավ նրա համար ձանձրալի, Թոմաս Վուլֆը, որին նա անվանում էր մեծ հանճար, շուտով նրա աչքին դարձավ սոսկ «ցուցադրականություն» /Arnold, 1963: 154/:

Բուկոփսկու մտորումները գրական գործունեության մասին շատ հաճախ հարաբերական են, իսկ երբեմն էլ՝ իրարամերժ: Տարիներ առաջ նա կարծում էր, որ ստեղծագործական գործընթացում կարևոր դեր է խաղում երկար տարիների կենսափորձը, սակայն հետագայում փոխեց մաս այդ տեսակետը: Բուկոփսկին գտնում է, որ գրողի ստեղծագործության վրա կարող է ազդել ցանկացած բան՝ փոփոխությունը անձնական կյանքում, պատմական իրադարձությունները, պատերազմների գործոնը: Նա համոզված է, որ եթե այս կամ այն գրողը ապրեր ավելի երկար, նա չէր ստեղծի որևէ նոր արժեքավոր գործ: Գրողների մեծ մասը ինչ-որ տարիքում «մեռնում» է որպես գրող, բայց շարունակում է պարզապես գրել սովորույթի ուժով /Arnold, 1963: 194/:

Բուկոփսկին շատ քննադատաբար էր մոտենում սեփական ստեղծագործությանը, եթե երկու-երեք փորձից հետո չէր ստացվում այնպես, ինչպես ինքը կուզենար, նա կարող էր շաբաթներով այլևս չգրել: Սակայն, երբ մուսան գալիս էր, նա կարող էր մեկ շաբաթում անընդմեջ գրել չորս-հինգ պատմվածք: Անդրադառնալով «Փոստատունը» վեպի ստեղծմանը՝ Բուկոփսկին նշում է, որ ինքը այն գրել է ընդամենը քսան գիշերների ընթացքում, քսան շիշ վիսկու «ընկերակցությամբ» /Arnold, 1963: 89/: Սա ցույց է տալիս, որ մինչ վեպը գրելը այն արդեն ծնվել ու ձևավորվել էր գրողի գլխում: Ուշագրավ է նաև, որ հեղինակի համար չկան հստակ սահմանագծեր ոչ միայն առանձին վերցրած պոեզիայի կամ արձակի շրջանակների ներսում, այլև ընդհանուր առմամբ այդ ժանրերի միջև. «Վեպը ավելի իրական է... դա նման է ներքնակի հարդարումի, որի վրա չես կարող քնել: Բայց դա կարելի է հարթել բնականաբար, եթե ստեղծես փոքրիկ գլուխներ: Վեպերի մեծ մասն ինձ համար ձանձրալի են՝ տե՛ր Աստված, դա սարսափելի է, բայց ճշմարտություն է... Հավանաբար, ես գրում եմ փոքրիկ բանաստեղծություններ, և դրանք բոլորը միավորվում են ու դառնում մեծ վեպ...» /Arnold, 1963: 73/:

Բուկոփսկու չափածո ստեղծագործություններում բավական մեծ թիվ են կազմում այնպիսի բանաստեղծություններ, որոնք իրենց հիմքում ըստ էության պատմվածքներ են, սակայն գրված են չափածո տողերով: Դրա վառ օրինակը «Աստծո մարդը» ժողովածուի պատմվածքներն են:



Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բոլոր նշված լեզվական և ժանրային առանձնահատկությունները բխում են ոչ թե «օրիգինալ» երևալու, ուրիշներից տարբերվելու հեղինակի ձգտումից, այլ ավելի շուտ թելադրված են Բուկովսկու ոչ ստանդարտ մտածելակերպով, գեղարվեստական աշխարհընկալման յուրահատկությամբ:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Arnold K. Charles Bukowski Speaks Out. Chicago: Literary Times, March 1963.
2. Martin J. This Flondering Old Bastard is the Best Damn Poet in Town. Los Angeles: Free Press, March, 1967.
3. Strachan D. An Evening with Charles Bukowski: A Pulpy Receptacle of Bad Karma, Self-Pity and Vengeance. Los Angeles: Free Press, July 23, 1971.
4. Chenetier M. Charles Bukowski, An Interview: Los Angeles, August 19, 1975, *Northwest Review*, vol. XVI, 1977.
5. Miller H. Beat Down to Your Soul. New York: Penguin Books, 2001.

**В. ХАЧАТУРЯН – Жанровые и языковые особенности произведений Чарльза Буковского.** – В статье исследуются жанровые и языковые особенности прозы и поэзии писателя американского «андерграунда» Чарльза Буковского. Отсутствие рифмы и вольная форма письма практически размывают границы между поэтическими и прозаическими произведениями: часто различие между ними выражается только в размере произведения и в длине строки. Своими творческими корнями Буковски связан с традициями немецкого романтизма и экспрессионизма, характерными чертами которых являются варьирование на грани безумства и здравого рассудка, стремление к раскрытию «ночи души». В языковом плане в произведениях Буковского очевидно сочетание простоты и ясности с прямоотой и грубостью «натуралистической» школы.

**Ключевые слова:** Буковски, рассказ, стихотворение, «грязный реализм», литература «андерграунда», традиция романтизма и импрессионизма

**V. KHACHATURYAN – Language and Genre Peculiarities of Charles Bukowski's works.** – The paper studies the variety of genres and language peculiarities of the American “underground” writer Ch. Bukowski. He is famous for both his poetic and prosaic works. Absence of rhythm and free style of his writings eliminate the boundary between his poetic and prosaic works. Sometimes the distinctive features are the length of the line and the work itself. Being of German descent, Bukowski follows the traditions of German romanticism and expressionism which are characterised by the emotionally unstable state of mind of the author and his determination to reveal the “darkside” of human soul. In terms of language the combination of simplicity and clarity along with spontaneity and toughness peculiar to the school of “naturalists” is evident in Bukowski's writings.

**Key words:** Bukowski, story, poem, “dirty realism”, literature of “underground”, romantic and expressionistic tradition